



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

CENTRE FOR POLICY STUDIES

*Վալտեր Բերբերյան*

# Զարգացող իրականությունը և ատելության խոսքը

Հրապարակումը լույս է տեսնում Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ապատեղեկատվության վերլուծություն և փորձագիտական կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում:

Երևան, հուլիս 2021

Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ապատեղեկատվության վերլուծություն և փորձագիտական կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում կազմակերպվել են դասընթացներ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների (մասնավորապես մարզային և տարածաշրջանային հասարակական ու երիտասարդական կազմակերպություններից), երիտասարդ վերլուծաբանների, ինչպես նաև ուսանողների համար: Դասընթացներում ներառված էին հետևյալ թեմաները.

- Հետազոտության դիզայն և մեթոդներ,
- Մեդիագրագիտություն. արշավ արդի լրատվական մանիպուլյացիաների դեմ,
- Արդյունավետ հաղորդակցության կազմակերպում ճգնաժամային պայմաններում,
- Ճգնաժամային իրավիճակներում սոցիալական ՁԼՄ-ներում ատելության խոսքի դրսևորումները:

Դասընթացների նպատակն էր նպաստել մասնակիցների կարողությունների զարգացմանը՝ հետագայում արդյունավետ հետազոտական աշխատանքներ իրականացնելու և հասարակության լայն շերտերում մեդիագրագիտությունը խթանող նախաձեռնություններով հանդես գալու համար: Մասնակիցները նաև ունեցել են գործնական աշխատանք կատարելու հնարավորություն՝ դասընթացները վարած փորձագետների խորհրդատվությամբ նախապատրաստելով իրենց հոդվածները:

Ծրագրի մասնակիցների հրապարակումները չեն արտահայտում Քաղաքականության հետազոտական կենտրոնի, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կամ որևէ այլ կառույցի տեսակետը:

Հոդվածաշարի խմբագիրներ՝ Արմեն Գրիգորյան, Վիկտորյա Մելքոնյան

*Վալտեր Բերբերյանը քանասիրության մագիստրոս է, ԵՊՀ հայ քանասիրության ու մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի շրջանավարտ: Երկու անգամ՝ քակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսանելիս, «Հանրապետության լավագույն ուսանող» մրցույթում զբաղեցրել է առաջին տեղը:*

*Հեղինակը շնորհակալություն է հայտնում ծրագրի կազմակերպիչներին՝ ուշադիր և մանրակրկիտ աշխատանքի համար, առանձնահատուկ շնորհակալությամբ հետազոտող, Մարդու իրավունքների խորհրդատու Նելլի Գիշյանին, և լիահույս է, որ առաջիկայում ևս մաս կկազմի հետաքրքիր նախաձեռնությունների:*

## **Չարգացող իրականությունը և ատելության խոսքը**

21-րդ դարում թոնչքային զարգացում են ապրում թե՛ հասարակական և հումանիտար, թե՛ բնական և տեխնիկական գիտությունները: Միջավայրը շատ արագ է փոխվում, իսկ մարդկանց մեծ մասը, ցավոք, չի փոխվում. նոր իրականության և հասարակության մեծ մասի միջև այսօր առկա է անհամարժեքություն: Ակնհայտ ճշմարտություն է, որ մարդիկ միշտ պետք է ժամանակի հետ քայլեն, բայց կան երևույթներ, որոնք մարդկանց հետ են պահում ներդաշնակ զարգացումից:

Խոսքը, ունենալով զորավոր ազդեցություն անհատների, հանրության վրա, գեղեցիկ, արտահայտիչ ու գրավիչն այլ դրսևորումներով պայմանավորված՝ հաղթանակներ է ապահովել ռազմի դաշտում, հերոսացման է մղել հայրենիքի զինվորին, պայմանավորել է հաջողությունը անձնային հարաբերություններում, գործի մեջ և այլն:<sup>1</sup>

Դրական այս և մի շարք այլ հատկություններ ունեցող խոսքն այսօր, կարծես, այլափոխվել է ատելության խոսքի. սոցցանցերի և այլ ժամանակակից իրողությունների շնորհիվ այն այժմ ավելի վառ է արտահայտված: Երևույթ, որի մասին վերջին շրջանում անընդմեջ խոսվում է, բայց հստակ սահմանում տալ մինչ օրս չի հաջողվում ո՛չ փիլիսոփաներին, ո՛չ բանասերներին, ո՛չ քաղաքագետներին, ո՛չ էլ իրավաբաններին:

Ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի սահմանման՝ ատելություն քարոզող, պարունակող և սերմանող խոսքը ներառում է արտահայտման բոլոր այն ձևերը, որոնք տարածում, հրահրում, խրախուսում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հրեատյացությունը կամ ատելության այլ ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ ագրեսիվ ազգայնականության և էթնոկենտրոնության միջոցով արտահայտվող անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ինչպես

<sup>1</sup> Տե՛ս Յու. Ավետիսյան և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Բ, Եր., 2015, էջ 16:

նան ներգաղթյալների և ներգաղթյալների ընտանիքից սերող անձանց նկատմամբ թշնամանքի և խտրականության դրսևորումները:<sup>2</sup>

Ատելության խոսքն ընդգրկում է արտահայտությունների բազմաթիվ ձևեր, տարբերակներ, որոնք զանազան պատճառներով տարածում, դրդում, խթանում կամ արդարացնում են անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելությունը, բռնությունը, խտրականությունը:<sup>3</sup> Անձի ռասան, սեռը, կրոնական պատկանելությունը, էթնիկական խումբը, գենդերային ինքնությունը, մաշկի գույնը, սեռական կողմնորոշումը, հաշմանդամությունը, ըստ էության, առանձնահատկություններ են, որոնք պայմանավորում են ատելության խոսքի կիրարկումը:

Վստահաբար կարող ենք ասել, որ ատելության խոսքը սահմաններ չի ճանաչում. այն ունի միջազգային տարածում և դրա դրսևորումներն ուղղակիորեն սպառնալիք են շատերի համար:

Ատելությունը, շաղկապված հակակրության և խորշանքի հետ, տևական ժամանակ իր տեղը զիջում էր հումանիզմին, մարդասիրությանը: Համաշխարհային մարդասիրական մրցանակի՝ «Ավրորայի» (անգլ.՝ Aurora Prize for Awakening Humanity), երևան գալը թվում էր՝ մարդկանց կտանի անդին ատելությունից, քանզի մարդկանց ուշադրությունն աշխարհի ամենախոցելի խմբերի խնդիրների վրա կենտրոնացնելով և դրանց լուծման ուղղությամբ իրական ու նշանակալի գործ կատարած մարդկանց պարգևատրելու միջոցով՝ հիմնադիրները փորձում էին ձևավորել մարդասիրական համաշխարհային նոր շարժում:<sup>4</sup> Գաղտնիք չէ, որ նման գլոբալ մարտահրավերը մեկ կամ մի քանի շարժմամբ, նախաձեռնությամբ, մրցանակով հնարավոր չէ հաղթահարել, բայցև ազնիվ նպատակներ որդեգրած շարժումները ձգտում են հասնել դրանց: Հավելենք, որ 2010-ական թթ. Եվրոպայի խորհուրդը մեկնարկեց քարոզարշավներ՝ մարդու իրավունքների խթանման նպատակով:

Մեդիան ևս կարող է աջակցել, պայքարել ատելության խոսքի դեմ: ՋԼՄ-ներում ատելության խոսքի դրսևորումներն այսօր չափազանց շատ են: Աշխարհի տարբեր երկրներ տարբեր քաղաքականություն են վարում ատելության խոսքի տարածումը սահմանափակելու, շահարկումը նվազեցնելու վերաբերյալ: Հայաստանը ևս անմասն չի մնում այդ գործընթացից:

Հայաստանում ատելության խոսքի կիրառման դեպքերը ստատիկ բնույթ չեն կրում: Ուշագրավ է, որ ըստ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի զեկույցի՝ 2018 թ. նախընտրական շրջանում գրանցվել է ատելության խոսքի կիրառման 172 դեպք:<sup>5</sup> Աներկբա է, որ այս դեպքում համագումարի բերված չեն սոցցանցերը

<sup>2</sup> Գրանիշեր - Ատելություն տարածող առցանց խոսքի դեմ պայքարը մարդու իրավունքների կրթության միջոցով, Եր., 2015, Էջ 13:

<sup>3</sup> Տե՛ս <https://www.coe.int/en/web/european-commission-against-racism-and-intolerance/hate-speech-and-violence>

<sup>4</sup> Տե՛ս <http://asbarez.com/137558/100-lives-opens-nomination-period-for-new-1-million-global-humanitarian-award/>

<sup>5</sup> Տե՛ս <https://uic.am/9676>



մասին» ԱԺ փոխնախագահ Ալեն Միմոնյանի օրենսդրական նախագիծը՝ եռապատկելով վիրավորանքի և զրպարտության համար նախատեսվող դրամական փոխհատուցումը՝ հասցնելով համապատասխանաբար 3 և 6 միլիոն դրամի:<sup>7</sup> Նախագծի ընդունումը հանգեցրեց բուռն քննարկումների, ինչպես նաև մի շարք ԶԼՄ-ների դժգոհության: Վիրավորանքի և զրպարտության համար նախատեսվող դրամական փոխհատուցումը եռապատկելու առնչությամբ մի շարք լրագրողական կազմակերպություններ (Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, Երևանի մամուլի ակումբ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Հանրային լրագրության ակումբ և այլն) հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ ՀՀ նախագահին կոչ անելով չստորագրել համապատասխան օրենքը: Ըստ լրագրողական կազմակերպությունների՝ օրենքը հիմնված չէ մասնագիտական խորը ուսումնասիրության ու վերլուծության վրա և հետապնդում է նեղ քաղաքական շահեր:<sup>8</sup> Առկա է մտահոգություն, որ օրենքի կիրառումն էական վնաս կհասցնի խոսքի ազատությանը: Հասարակական վեճերը, քննարկումները, տարաձայնություններն այս հարցի շուրջ մշտապես շարունակվում են:

Այսպիսով, այսօր առավել քան երբևէ կարևորվում է անձի առողջ ձևավորումն ու զարգացումը, իսկ ատելության խոսքը, իլլելով ժամանակ, ամեն կերպ նպաստում է հետընթացին: Ատելության խոսքի փոխարկումն առողջ քննադատության հնարավոր է քննադատական հայացքների, ինքնուրույն մտածողության, վերլուծական կարողությունների, բանակցելու հմտությունների, բանավիճելու արվեստի գործարկմամբ: Ճիշտ սոցիալիզացումն ու դաստիարակումը, մեդիագրագետ հասարակության ստեղծումը, ինչպես նաև օրենսդրության, կոշտ մեխանիզմների կիրառումը ճանապարհ կհարթեն ատելության խոսքի զսպման և կարգավորման համար:

---

<sup>7</sup> Տե՛ս <https://hetq.am/hy/article/128910>

<sup>8</sup> Առավել մանրամասն տե՛ս <https://hetq.am/hy/article/128947>